Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021
թվականի դեկտեմբերի 28-ի N 93 -Ն որոշման

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝
   քաղաքային բնակավայրերում ֆիզիկական անձանց համար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.
   գյուղական բնակավայրերում ֆիզիկական անձանց համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ.
   իրավաբանական անձանց համար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.
3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
   քաղաքային բնակավայրերում ֆիզիկական անձանց համար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.
   գյուղական բնակավայրերում ֆիզիկական անձանց համար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ.
   իրավաբանական անձանց համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ.
4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝
   ոչ գյուղ նշանակության հողերի համար՝ 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ.
   գյուղ նշանակության հողերի համար՝ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ.
5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ.
6. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ.

7. Համայնքում աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4. 1-ի.
8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝
   1)ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ, կամ
   2)ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ:
9. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի աղբահանությունը կազմակերպվում է համայնքի կողմից, միայն այն ժամանակ, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձը համայնքի հետ կնքում է աղբահանության համար այլ տեխնիկաներ տրամադրելու պայմանագիր:
10. Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ 20 (քսան) ՀՀ դրամ.
11. Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ մեկ ուսումնական տարվա համար 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, և համայնքում ածնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում չունեցող օգտվողների համար՝ (բացառությամբ ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող զինծառայողների, ՀՀ կառավարությանը առընթեր ազգային անվտանգության ծայայության և ՀՀ ոստիկանության համակարգերում ծառայողների երեխաների) 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
12. Համայնքային ենթակայության <<ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԵՎԻՔ>> ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար մեկ ուսումնական տարվա համար ըստ բաժինների՝
   1)Դաշնամուրային բաժին՝27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ
   2)Վոկալ բաժին՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ
   3)Լարային բաժին՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ
   4)Ազգային նվագարանների բաժին՝ 0 (զրո) ՀՀ դրամ
   5)Կիրառական արվեստի բաժին՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ
   6)Գեղանկարչության բաժին՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ
   7)Փողային բաժին՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ
   8)Պարային բաժին՝36000 (երեսունվեց հազար) ՀՀ դրամ:
13. Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ.

14. Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝ յուրաքանչյուր 1 ժամվա համար՝ 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ, յուրաքանչյուր 1 օրվա համար՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ, 1 շաբաթվա համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ, 1 ամսվա համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, 1 տարվա համար՝ 24000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ.
15. Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար վճար՝ 0 (զրո) ՀՀ դրամ.
16. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝ 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամ.
17. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ համաձայն հավելված 4.2-ի :
18. համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

1)Ֆիզիկական անձանց սեփականություն համարվող հողամասերի, բազմաբնակարան շենքերի բնակարանների ու բնակելի տների համար՝

ա. Ագարակ և Մեղրի քաղաքներում՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ.

բ. Լեհվազ և Կարճևան գյուղերում՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ.

գ. Մեղրի համայնքի մնացած գյուղական բնակավայրերում՝ 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2) Ֆիզիկական անձանց սեփականություն համարվող ոչ բնակելի շինությունների համար՝

ա. Ագարակ և Մեղրի քաղաքներում՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.

բ. Լեհվազ և Կարճևան գյուղերում՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ.

գ. Մեղրի համայնքի մնացած գյուղական բնակավայրերում՝ 500 (հինգ հարյուր) դրամ:

3) Իրավաբանական անձանց սեփականություն համարվող անշարժ գույքի համար՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված 4.1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
թվականի դեկտեմբերի 28 -ի 93-Ն որոշման

2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանել՝

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ,

2) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) ՀՀ դրամ:

2.Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանել ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) Առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝

ա. մթերային խանութներ, հանրախանութներ, տաղավարներ, կրպակներ, վաճառասեղաններ, հասարակական սննդի օբյեկտներ, գեղեցկության սրահներ՝ 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ,

բ. շինանյութի, տնտեսական ապրանքների խանութներ, սուպերմարկետներ, գյուղմթերքի շուկաներ, բանջարեղենի, մսամթերքի և ծաղկի խանութներ, դեղատներ, ավտոարհեստանոցներ, բենզալցակայաններ, գազալցակայաններ, ավտոլվացման կետեր, կենցաղային, հեռուստառադիո և համակարգչային տեխնիկայի վերանորոգման խանութ – սրահներ, կարի արհեստանոցներ, քիմիական մաքրման սրահներ և լվացքատներ՝ 60 (վաթսուն) ՀՀ դրամ,

2)հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) ՀՀ դրամ,

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (տասնհինգ) ՀՀ դրամ,

4)կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (տասնհինգ) ՀՀ դրամ,

5)շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով:

3. Ոչ կենցաղային աղբի համար աղբահանության վճարը սահմանել՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ, կամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՋԱՔԱՐՅԱՆ

Հավելված 4.2
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021
թվականի դեկտեմբերի 28-ի N 93-Ն որոշման

2022 ԹՎԱԿԱՆԻ

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Հ/հ	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՃԱՐ (ՀՀ դրամ)
1.	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	750 (յոթ հարյուր հիսուն)
2.	Ծննդօգնություն	
	թեթև միջամտություն	1500 (մեկ հազար հինգ հարյուր)
	ծանր միջամտություն	12000 (տասներկու հազար)
3.	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	

	Մանր կենդանի	150 (մեկ հարյուր հիսուն)
	Խոշոր կենդանի	350 (երեք հարյուր հիսուն)
4.	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	600 (վեց հարյուր)
5.	Ախտահանություն՝ յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար	250 (երկու հարյուր հիսուն)
6.	Միջատազերծում՝ (դեզինսեկցիա) յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար	150 (մեկ հարյուր հիսուն)
7.	Կրծողների ոչնչացում՝ (դեռատիզացիա) յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար	200 (երկու հարյուր)
8.	Արհեստական սերմնավորում	6000 (վեց հազար)
9.	Կենդանու հերձում	
	մանր կենդանի	1000 (մեկ հազար)
	խոշոր կենդանի	3000 (երեք հազար)
10.	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը	

	մանր կենդանի	1000 (մեկ հազար)
	խոշոր կենդանի	2000 (երկու հազար)
11.	Կենդանիների նախասպանդային զննում	
	մանր կենդանի	1000 (մեկ հազար)
	խոշոր կենդանի	2000 (երկու հազար)
12.	Կենդանիների հետսպանդային զննում	
	մանր կենդանի	1000 (մեկ հազար)
	խոշոր կենդանի	2000 (երկու հազար)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԶԱՔԱՐՅԱՆ